UNIVERSITÉ DE GENÈVE
FACULTÉ DES LETTRES
Unité d'arménien

UNIL | Université de Lausanne
Faculté des lettres

Հայկական Ուսումներու Միջազգային Ընկերակցութեան 16-րդ ընդհանուր գիտաժողով
Ժնեւի համալսարան, Լօզանի համալսարան
9–11 Յունուար 2025թ.

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ

Հայկական Ուսումներու Միջազգային Ընկերակցութեան սիրելի անդամներ,

Հաճութեամբ տեղեկացնում ենք, որ ՀՈՒՄԸ-ի 16-րդ ընդհանուր գիտաժողովը կը կայանա Ժնեւի եւ Լօզանի համալսարաններում, 2025թ. Յունուարի 9-11-ը: Ժնեւի համալսարանում ընթացող վերանորոգման աշխատանքների հետ կապուած տեխնիկական պատճառներով, ցաւօք, հնարաւոր չեղաւ գիտաժողովը կազմակերպել 2024թ. սեպտեմբերին, ինչպէս յայտարարուած էր ՀՈՒՄԸ-ի *Տեղեկագրի* (*Newsletter*) վերջին համարում:

Ցայտերն ընդունում են հայագիտութեան բոլոր բնագաւառներին վերաբերող թեմաներով: Ելոյթներից իւրաքանչիւրի համար նախատեսուած է 20 րոպէ, որին կը յաջորդի 10 րոպէ բանավէճ: Ըստ ստացուած ելոյթների քանակի եւ բովանդակութեան՝ կը լինեն լիագումար եւ զուգահեռ-թեմատիկ նիստեր: Լիագումար նիստի ընթացքում կը զեկուցեն միայն հրաւիրեալ մասնակիցները: ՀՈՒՄԸ-ի գիտաժողովների աւանդական լեզուներն են՝ անգլերէնը, գերմաներէնը, իտալերէնը, հայերէնը, ռուսերէնը եւ ֆրանսերէնը:

Ցանկանում ենք յիշեցնել, որ գիտաժողովին կարող են մասնակցել միայն ՀՈՒՄԸ-ի կանոնաւոր անդամները (ըստ առնուազն 2024–2025թթ. անդամավճարների):

Գիտաժողովին մասնակցել ցանկացողները սիրով հրաւիրուում են յայտը ներկայացնել **մինչեւ 2024թ. Օգոստոս 10-ը՝** առցանց լրացնելով գրանցաթերթիկը:

Որպէս հիմնական զեկուցողներ իրենց մասնակցութիւնն արդէն հաստատել են Փրոֆ. Յոստ Գիպերտը (Համբուրգի համալսարան), Դր. Վահէ Թորոսեանը (Մատենադարանի գիտական հարցերով փոխտնօրէն) և Դր. Սյուզան Մերյեմ Կալայջի (Օքսֆորդի համալսարան):

Ամենայն հաճութեամբ տեղեկացնում ենք նաեւ, որ 2024թ. Ժնեւի համալսարանը տօնում է Հայագիտական ուսումնասիրութիւնների կենտրոնի հիմնադրման Յիսնամեակը: Հոբելեանին նուիրուած տարբեր միջոցառումների շարքում Գիտաժողովի շրջանակներում կը կազմակերպուի կլոր սեղան՝ քննարկելու համար հայագիտութեան առջեւ ծառացած մարտահրաւէրները, մասնաւորապէս՝ եւրոպական գիտական շրջանակներում:

Կազմակերպչական կոմիտէի անունից սրտանց ողջոյններով
Վալենթինա Քալցոլարի եւ Ռոբին Մեյեր

Նամականի

Ընդհանուր գիտաժողովի վերաբերեալ ցանկացած հարցի դէպքում խնդրում ենք դիմել հետեւեալ հասցէով **aiea.gc2025@gmail.com**

Մասնակցութեան վճար

Մասնակցութեան վճարը կազմում է 50€; 25€ Տնտեսական համագործակցութեան եւ զարգացման Կազմակերպութեան հաստատած ցուցակում ընդգրկուած ցածր եւ միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների բնակիչների համար, որոնց թւում են. Արգենտինա, Բելառուս, Թուրքիա, Իրան, Լիբանան, Հայաստան, Վրաստան, Ուկրաինա

Ցաչորդ շրջաբերականները

Առաջին շրջաբերականի յիշեցում՝ 2024թ Սեպտեմբերի սկիզբը.

- որի պատասխանն ակնկալում ենք մինչեւ Օգոստոս 10-ը (ինչպէս նշուած է վերը)

Երկրորդ շրջաբերական՝ 2024թ. Հոկտեմբերի սկիզբը.

- Գիտաժողովի նախնական ծրագիր
- Հիւրանոցների ընտրութիւն՝ գնացանկով

Երրորդ շրջաբերական՝ 2024թ. Նոյեմբեր.

- Գիտաժողովի վերջնական ծրագիր
- մասնակցութեան հաստատման մասին հարցում

Կազմկոմիտէ.
Պրոֆ. Վալենթինա Քալցոլարի (Ժնեւ) եւ Պրոֆ. Ռոբին Մեյեր (Լօզան)

Գիտական կոմիտէ (ՀՈՒՄԸ-ի կոմիտէի անդամներ)
Պրոֆ. Թառա Էնդրիւս
Պրոֆ. Մարկո Բախս
Պրոֆ. Նազէնի Ղարիբեան
Դոկ. Էմիլիո Բոնֆիլիո
Դոկ. Իրենէ Տինտի